ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N206-Ա

«25» ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՌԴ ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ (2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ) ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՌԴ ԱՐԽԱՆԳԵԼՍԿԻ ՄԱՐԶ ՄԵԿՆՈՂ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2121-Ն որոշումը, «ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և ՌԴ Արխանգելսկի մարզի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագիրը» և համաձայնագրի 2022-2024 թվականների համար գործողությունների ծրագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից 2022թ. հոկտեմբերի 29-ին փոխանակման ծրագրով ՀՀ Վայոց ձորի մարզից ՌԴ Արխանգելսկի մարզ մեկնող 10 աշակերտից և 1 ուղեկցող անձից կազմված պատվիրակությանը, մարզը ներկայացնելու համար անհրաժեշտ ծախսեր կատարելու նպատակով, տրամադրել դրամական օժանդակություն՝ 326000 (երեք հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Պատվիրակության ղեկավարին՝ մեկնելուց առաջ ներկայացնել հաշվետվություն և կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով եռօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:

10/25/2022

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

բ. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
"....." ....2022թ. թիվ........որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի պատվիրակության՝ ՌԴ Արխանգելսկի մարզ նախատեսվող այցելության նախահաշվարկ

Հ/հ	Անվանում	Նկարագրություն	Արժեք /ՀՀ դրամ/
1	Տրանսպորտային ծախսեր	Հոկտեմբերի 29-ին, ՀՀ Վայոց ձորի մարզից Զվարթնոց օդանավակայան (Ջերմուկ-Վայք-Մալիշկա-Եղեգնաձոր-Երևան երթուղի)	75000
2		Նոյեմբերի 8-ին, Զվարթնոց օդանավակայանից ՀՀ Վայոց ձորի մարզ (Երևան-Եղեգնաձոր-Մալիշկա-Վայք-Ջերմուկ երթուղի)	75000
3	Հագուստ	Ազգային տարազ 11 հատ	99000
4	Հուշանվեր	7 հատ	32000
5		Ազգային չրերի կոմպլեկտ 7 հատ	45000
		Ընդամենը	326000